Հավելված 4
«ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/24»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/24-1

ք. Սևան «13» օգոստոսի 2019թ.

ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Շավարշ Գրիգորյանի, որը գործում է ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վաղինակ Եղիազարյանի, որը գործում է <<Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա>> ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 12774000 /տասներկու միլիոն յոթ հարյուր յոթանասունչորս հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[17] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

---

[17] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ
Ք.Սևան Կարմիր Բանակի 68	Արարատի մարզ ք. Մասիս 1-ին փողոց
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ Սևանի մ/Ճ	Հ/Հ 2472900158630000
Հ/Հ 163148133255	ՀՎՀՀ 03804898
ՀՎՀՀ 08601459	
Տնօրեն՝ _____ Հ. Գրիգորյան	Տնօրեն՝ _____ Վ. Եղիազարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
L.S.	L.S.

Հավելված N 1
« 13 » օգոստոսի 2019 թ. կնքված
ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/24-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									Մատակարարման		
հերթական համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը***	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն**	ենթակա քանակը	ժամկետը
1	18411210	Սպորտային հագուստ կանացի ամառային	ՀՀ	**ԿԱՆԱՑԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱԳՈՒՍՏ** ***Նկարագիր*** Կանացի դասական սպորտային վերնահագուստ /համաձայն հավելվածի /կցվում է/: Տաբատի գոտին 4սմ էլաստիկ, համակցված ժապավենով /կապույտ գույնի/, աջ և ձախ կողմերը գրպաններով /կապույտ գույնի/, ձախ կողմի գրպանի վրա պետք է մետաքյա թելով ասեղնագործած լինի հիվանդանոցի լոգոն /երկարությունը 10սմ, լայնությունը 10 սմ/՝ երկու գույներով՝ կապույտ (գույնի կոդը PANTONE 2945C) և սպիտակ : Կազմակերպության լոգոյի դիզայնի ֆայլը .pdf ֆորմատով կցվում է: Կոնքամասը նորմայից լայն 10%: Վերնահագուստը երկարաթև, թևերը /կապույտ գույնի/ և ներքևամասը մանժետով /կապույտ գույնի/, ձախ թևի	լրակազմ	5418	1354500	250	Ք. Սևան Կարմիր բանակի 68	250	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օրվա ընթացքում

				վրա պետք է մետաքյա թելով ասեղնագործած լինի հիվանդանոցի լոգոն /երկարությունը 10սմ, լայնությունը 10 սմ/, գրպաններով /կապույտ գույնի/, փակումը կայծակ-շղթայով և լանջափեշատակով /կապույտ գույնի/, օձիքը կանգունակով /կապույտ գույնի/: *Առանձնահատկություններ* Բոլոր միացնող կարերը մշակվում են 4 թել մաքրակարով: Բոլոր մշակումները կատարվում են ունիվերսալ մեքենայով: Վերնազգեստի աջ և ձախ կողմերում մշակված են կտրովի գրպաններ: Թևերը և ներքևամասը մշակվում են էլաստիկ մանժետով լայնությունը 5- 6 սմ: Հատվող կարերը ամրակարվում են հատուկ նշանակության մեքենայով: Տաբատի գոտին մշակվում է էլաստիկ ժապավենով լայնությունը 4 սմ և գոտկատեղը հարթակարվում է, որի մեջ տեղադրվում է շարժական ժապավեն: Տաբատի գրպանները ունեն թեք կտրվածք: Տոտերը մշակվում են հարթակարով լայնությունը 1.5-1.8սմ: Չափերի թույլատրելի առավելագույն շեղումը 1 սմ: *Գույն* Կանաչ գույնի /երանգները համաձայնեցնել նմուշը ներկայացնելու ժամանակ/: *Կտորի բաղադրություն* 95% բամբակ, 5% սպանդեքս Կտորի տեսակը «2-yarn 30/30» ,							

				խտությունը նվազագույնը 240/մ2: *Կար* Թելի գույն- ըստ կտորի գույնի Հարթակար կարի խտությունը 3.5կկթ/սմ, լայնությունը 7-9մմ, թելը 150/2 den 100% պոլիէսթեր: Մաքրակարերի թել 150/2 den 100% պոլիէսթեր, կարի խտությունը 3.5կկթ/սմ, նվազագույնը լայնությունը 0.6 սմ: *Փաթեթավորում* Յուրաքանչյուր հավաքածուն պետք է փաթեթավորված լինի մեկ պոլիէթիլենային տոպրակով: *Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Վաճառողը պարտավոր է Գնորդի համաձայնեցմանը ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշները, որից հետո միայն մատակարարել ապրանքները՝ համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրերի և համաձայնեցված նմուշների:*							
2	18411210	Սպորտային հագուստ տղամարդու ամառային	<<	ՏՂԱՄԱՐԴՈՒ ԱՄԱՌԱՅԻՆ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱԳՈՒՍՏ *Նկարագիր* Տղամարդու դասական սպորտային վերնահագուստ /համաձայն հավելվածի /կցվում է/: Տաբատի գոտին 4սմ էլաստիկ, համակցված ժապավենով /կանաչ գույնի/, աջ և ձախ կողմերը գրպաններով /կանաչ գույնի/, ձախ կողմի գրպանի վրա պետք է մետաքյա թելով	լրակազմ	5418	1354500	250	Ք. Սևան Կարմիր բանակի 68	250	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օրվա ընթացքում

				ասեղնագործած լինի հիվանդանոցի լոգոն /երկարությունը 10սմ, լայնությունը 10 սմ/՝ երկու գույներով՝ կապույտ (գույնի կոդը PANTONE 2945C) և սպիտակ : Կազմակերպության լոգոյի դիզայնի ֆայլը .pdf ֆորմատով կցվում է: Վերնահագուստը երկարաթև, թևերը /կանաչ գույնի/ և ներքևամասը մանժետով /կանաչ գույնի/, ձախ թևի վրա պետք է մետաքյա թելով ասեղնագործած լինի հիվանդանոցի լոգոն /երկարությունը 10սմ, լայնությունը 10 սմ/,գրպաններով /կանաչ գույնի/, փակումը կայծակ-շղթայով և լանջափեշատակով /կանաչ գույնի/, օձիքը կանգունակով /կանաչ գույնի/: *Առանձնահատկություններ* Բոլոր միացնող կարերը մշակվում են 4 թել մաքրակարով: Բոլոր մշակումները կատարվում են ունիվերսալ մեքենայով: Վերնազգեստի աջ և ձախ կողմերում մշակված են կտրովի գրպաններ: Թևերը և ներքևամասը մշակվում են էլաստիկ մանժետով լայնությունը 5- 6 սմ: Հատվող կարերը ամրակարվում են հատուկ նշանակության մեքենայով: Տաբատի գոտին մշակվում է էլաստիկ ժապավենով լայնությունը 4 սմ և գոտքատեղը հարթակարվում է, որի մեջ տեղադրվում է շարժական ժապավեն: Տաբատի գրպանները ունեն թեք կտրվածք: Տոտերը մշակվում են հարթակարով լայնությունը 2-2.5սմ:							

				Չափերի թույլատրելի առավելագույն շեղումը 1 սմ: *Գույն* Կապույտ գույնի /երանգները համաձայնեցնել նմուշը ներկայացնելու ժամանակ/: *Կտորի բաղադրություն* 95% բամբակ, 5% սպանդեքս Կտորի տեսակը «2-yarn 30/30» , խտությունը նվազագույնը 240/մ2: *Կար* Թելի գույն- ըստ կտորի գույնի Հարթակար կարի խտությունը՝ 3.5կկթ/սմ, լայնությունը 7-9մմ, թելը 150/2 den 100% պոլիէսթեր: Մաքրակարերի թել 150/2 den 100% պոլիէսթեր, կարի խտությունը 3.5կկթ/սմ, նվազագույնը լայնությունը 0.6 սմ: *Փաթեթավորում* Յուրաքանչյուր հավաքածուն պետք է փաթեթավորված լինի մեկ պոլիէթիլենային տոպրակով: *Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Կաճառողը պարտավոր է՝ Գնորդի համաձայնեցմանը ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշները, որից հետո միայն մատակարարել ապրանքները՝ համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրերի և համաձայնեցված նմուշների:*							

3	18411210	Սպորտային հագուստ կանացի ձմեռային	<<	ԿԱՆԱՑԻ ՁՄԵՌԱՅԻՆ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱԳՈՒՍՏ *Նկարագիր* Կանացի դասական սպորտային վերնահագուստ /համաձայն հավելվածի /կցվում է/: Տաբատի գոտին 4սմ էլաստիկ, համակցված ժապավենով /կապույտ գույնի/, աջ և ձախ կողմերը գրպաններով /կապույտ գույնի/, ձախ կողմի գրպանի վրա պետք է մետաքյա թելով ասեղնագործած լինի հիվանդանոցի լոգոն /երկարությունը 10սմ, լայնությունը 10 սմ/՝ երկու գույներով՝ կապույտ (գույնի կոդը PANTONE 2945C) և սպիտակ : Կազմակերպության լոգոյի դիզայնի ֆայլը .pdf ֆորմատով կցվում է: Կոնքամասը նորմայից լայն 10%: Վերնահագուստը երկարաթև, թևերը /կապույտ գույնի/ և ներքևամասը մանժետով /կապույտ գույնի/, ձախ թևի վրա պետք է մետաքյա թելով ասեղնագործած լինի հիվանդանոցի լոգոն /երկարությունը 10սմ, լայնությունը 10 սմ/, գրպաններով /կապույտ գույնի/, փակումը կայծակ-շղթայով և լանջափեշատակով /կապույտ գույնի/, օձիքը կանգունակով /կապույտ գույնի/: *Առանձնահատկություններ* Բոլոր միացնող կարերը մշակվում են 4 թել մաքրակարով: Բոլոր մշակումները կատարվում են ունիվերսալ մեքենայով: Վերնազգեստի աջ և ձախ կողմերում մշակված են կտրովի գրպաններ: Թևերը և ներքևամասը մշակվում են էլաստիկ մանժետով լայնությունը 5- 6 սմ: Հատվող	լրակազմ	6219	1554750	250	Ք. Սևան Կարմիր բանակի 68	250	2019թ-ի սեպտեմբեր ամսին

				կարերը ամրակարվում են հատուկ նշանակության մեքենայով: Տաբատի գոտին մշակվում է էլաստիկ ժապավենով լայնությունը 4 սմ և գոտքատեղը հարթակարվում է, որի մեջ տեղադրվում է շարժական ժապավեն: Տաբատի գրպանները ունեն թեք կտրվածք: Տոտերը մշակվում են հարթակարով լայնությունը 1.5-1.8սմ : Չափերի թույլատրելի առավելագույն շեղումը 1 սմ: *Գույն* Կանաչ գույնի /երանգները համաձայնեցնել նմուշը ներկայացնելու ժամանակ/: *Կտորի բաղադրություն* 100% բամբակ Կտորի տեսակը Futer, խտությունը նվազագույնը 290/մ2 *Կար* Թելի գույն- ըստ կտորի գույնի Հարթակար կարի խտությունը 3.5կկթ/սմ, լայնությունը 7-9մմ, թելը 150/2 den 100% պոլիէսթեր: Մաքրակարերի թել 150/2 den 100% պոլիէսթեր, կարի խտությունը 3.5կկթ/սմ, նվազագույնը լայնությունը 0.6 սմ: *Փաթեթավորում* Յուրաքանչյուր հավաքածուն պետք է փաթեթավորված լինի մեկ պոլիէթիլենային տոպրակով: *Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Վաճառողը պարտավոր է Գնորդի համաձայնեցմանը ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշները, որից հետո միայն*							

				մատակարարել ապրանքները՝ համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրերի և համաձայնեցված նմուշների:							
4	18411210	Սպորտային հագուստ տղամարդու ձմեռային	<<	ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁՄԵՌԱՅԻՆ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱԳՈՒՍՏ *Նկարագիր* Տղամարդու դասական սպորտային վերնահագուստ /համաձայն հավելվածի /կցվում է/: Տաբատի գոտին 4սմ էլաստիկ /կանաչ գույնի/, համակցված ժապավենով /կանաչ գույնի/, աջ և ձախ կողմերը գրպաններով /կանաչ գույնի/, ձախ կողմի գրպանի վրա պետք է մետաքյա թելով ասեղնագործած լինի հիվանդանոցի լոգոն /երկարությունը 10սմ, լայնությունը 10 սմ/՝ երկու գույներով՝ կապույտ (գույնի կոդը PANTONE 2945C) և սպիտակ : Կազմակերպության լոգոյի դիզայնի ֆայլը .pdf ֆորմատով կցվում է: Վերնահագուստը երկարաթև, թևերը /կանաչ գույնի/և ներքևամասը մանժետով /կանաչ գույնի/, ձախ թևի վրա պետք է մետաքյա թելով ասեղնագործած լինի հիվանդանոցի լոգոն /երկարությունը 10սմ, լայնությունը 10 սմ/, գրպաններով /կանաչ գույնի/, փակումը կայծակ-շղթայով և լանջափեշատակով /կանաչ գույնի/, օձիքը կանգունակով /կանաչ գույնի/: *Առանձնահատկություններ* Բոլոր միացնող կարերը մշակվում են 4 թել մաքրակարով: Բոլոր	·լրակազմ	6219	1554750	250	Ք. Սևան Կարմիր բանակի 68	250	2019թ-ի սեպտեմբեր ամսին

				մշակումները կատարվում են ունիվերսալ մեքենայով: Վերնազգեստի աջ և ձախ կողմերում մշակված են կտրովի գրպաններ: Թևերը և ներքևամասը մշակվում են էլաստիկ մանժետով լայնությունը 5- 6 սմ: Հատվող կարերը ամրակարվում են հատուկ նշանակության մեքենայով: Տաբատի գոտին մշակվում է էլաստիկ ժապավենով լայնությունը 4 սմ և գոտքատեղը հարթակարվում է, որի մեջ տեղադրվում է շարժական ժապավեն: Տաբատի գրպանները ունեն թեք կտրվածք: Տոտերը մշակվում են հարթակարով լայնությունը 2-2.5սմ : Չափերի թույլատրելի առավելագույն շեղումը 1 սմ: *Գույն* Կապույտ գույնի /երանգները համաձայնեցնել նմուշը ներկայացնելու ժամանակ/: *Կտորի բաղադրություն* 100% բամբակ Կտորի տեսակը Futer, խտությունը նվազագույնը 290/մ2 *Կար* Թելի գույն- ըստ կտորի գույնի Հարթակար կարի խտությունը 3.5կկթ/սմ, լայնությունը 7-9մմ, թելը 150/2 den 100% պոլիէսթեր: Մաքրակարերի թել 150/2 den 100% պոլիէսթեր, կարի խտությունը 3.5կկթ/սմ, նվազագույնը լայնությունը 0.6 սմ:							

				Փաթեթավորում Յուրաքանչյուր հավաքածուն պետք է փաթեթավորված լինի մեկ պոլիէթիլենային տոպրակով: *Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Վաճառողը պարտավոր է Գնորդի համաձայնեցմանը ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշները, որից հետո միայն մատակարարել ապրանքները՝ համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրերի և համաձայնեցված նմուշների:*							
5	18341100	Շապիկ տղամարդու ձմեռային	<<	ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁՄԵՌԱՅԻՆ ՇԱՊԻԿ *Նկարագիր* Տղամարդու դասական ձմեռային շապիկ, երկար թևերով (ըստ հավելվածի գծապատկերի /կցվում է/): *Առանձնահատկություններ* Բոլոր միացնող կարերը մշակվում են 4 թել մաքրակարով: Վիզը մշակվում է էլաստիկ մանժետով /կանաչ գույնի/լայնությունը 2-2.5 սմ: Մայկայի ներքևամասը մշակվում է հարթակարով լայնությունը 1.8-2սմ: Թևերը /կանաչ գույնի/ մշակվում են էլաստիկ մանժետով լայնությունը 5- 6 սմ /կանաչ գույնի/: Ձախ թևի վրա պետք է մետաքյա թելով ասեղնագործած լինի հիվանդանոցի լոգոն /երկարությունը 10սմ, լայնությունը 10 սմ/՝ երկու գույներով՝ կապույտ (գույնի կոդը PANTONE 2945C) և սպիտակ : Կազմակերպության լոգոյի դիզայնի ֆայլը	հատ	2820	705000	250	Ք. Սևան Կարմիր բանակի 68	250	2019թ-ի սեպտեմբեր ամսին

				.pdf ֆորմատով կցվում է: Հատվող կարերը ամրակարվում են հատուկ նշանակության մեքենայով: Չափերի թույլատրելի առավելագույն շեղումը 1 սմ: *Գույն* Կապույտ գույնի /երանգները համաձայնեցնել նմուշը ներկայացնելու ժամանակ/: *Կտորի բաղադրություն* 100% բամբակ Կտորի տեսակը Futer խտությունը նվազագույնը 190գր/մ2 *Կար* Թելի գույն- ըստ կտորի գույնի Հարթակար կարի խտությունը 3.5կկթ/սմ, լայնությունը 7-9մմ, թելը 150/2 den 100% պոլիէսթեր: Մաքրակարերի թել 150/2 den 100% պոլիէսթեր, կարի խտությունը 3.5կկթ/սմ, նվազագույնը լայնությունը 0.6 սմ: *Փաթեթավորում* Յուրաքանչյուր տասը հատը պետք է փաթեթավորված լինի մեկ պոլիէթիլենային տոպրակով: *Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Կաճառողը պարտավոր է Գնորդի համաձայնեցմանը ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշները, որից հետո միայն մատակարարել ապրանքները՝ համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրերի և համաձայնեցված նմուշների:*							

6	18341100	Շապիկ կանացի /ձմեռային/	<<	ԿԱՆԱՑԻ ՁՄԵՌԱՅԻՆ ՇԱՊԻԿ ԵՐԿԱՐ ԹԵՎԵՐՈՎ *Նկարագիր* Կանացի դասական շապիկ t-shirt, երկար թևերով(ըստ հավելվածի գծապատկերի /կցվում է/): *Առանձնահատկություններ* Բոլոր միացնող կարերը մշակվում են 4 թել մաքրակարով: Վիզը մշակվում է էլաստիկ մանժետով /կապույտ գույնի/լայնությունը 2-2.5 սմ: Մայկայի ներքևամասը մշակվում է հարթակարով լայնությունը 1.8-2սմ: Թևերը /կապույտ գույնի/ մշակվում են էլաստիկ մանժետով /կապույտ գույնի/լայնությունը 5- 6 սմ: Ձախ թևի վրա պետք է մետաքյա թելով ասեղնագործած լինի հիվանդանոցի լոգոն /երկարությունը 10սմ, լայնությունը 10 սմ/՝ երկու գույներով՝ կապույտ (գույնի կոդը PANTONE 2945C) և սպիտակ : Կազմակերպության լոգոյի դիզայնի ֆայլը .pdf ֆորմատով կցվում է: Հատվող կարերը ամրակարվում են հատուկ նշանակության մեքենայով: Չափերի թույլատրելի առավելագույն շեղումը 1 սմ: *Գույն* Կանաչ գույնի /երանգները համաձայնեցնել նմուշը ներկայացնելու ժամանակ/: *Կտորի բաղադրություն* 100% բամբակ Կտորի տեսակը Futer խտությունը նվազագույնը 190գր/մ2	հատ	2820	705000	250	Ք. Սևան Կարմիր բանակի 68	250	2019թ-ի սեպտեմբեր ամսին

				Կար Թելի գույն- ըստ կտորի գույնի Հարթակար կարի խտությունը 3.5կկթ/սմ, լայնությունը 7-9մմ, թելը 150/2 den 100% պոլիէսթեր: Մաքրակարերի թել 150/2 den 100% պոլիէսթեր, կարի խտությունը 3.5կկթ/սմ, նվազագույնը լայնությունը 0.6 սմ: *Փաթեթավորում* Յուրաքանչյուր տասը հատը պետք է փաթեթավորված լինի մեկ պոլիէթիլենային տոպրակով: *Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Կապալառուն պարտավոր է Գնորդի համաձայնեցմանը ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշները, որից հետո միայն մատակարարել ապրանքները՝ համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրերի և համաձայնեցված նմուշների:*							
7	18311150	Զուգագուլպաներ /անթաթ/	<<	ԿԱՆԱՑԻ ԱՆԹԱԹ ԶՈՒԳԱԳՈՒԼՊԱ *Նկարագիր* Կանացի անթաթ զուգագուլպա ըստ հավելվածի /կցվում է/: *Առանձնահատկություններ* Զուգագուլպան պետք է լինի մուգ, միագույն: Դետալները պետք է միացված լինեն կցակարով: Գոտիի էլաստիկի լայնությունը 4 սմ, տոտերինը՝ 3սմ: Չափսը որպես	հատ	645	645000	1,000	Ք. Սևան Կարմիր բանակի 68	1,000	2019թ-ի սեպտեմբեր ամսին

				դիզայն նշվում է էլաստիկի հակառակ երեսին: Զուգագուլպայի քաշը ոչ պակաս 115գր: Չափերի թույլատրելի առավելագույն շեղումը 0.7 սմ: *Գույն* Սև, մուգ մոխրագույն, մուգ կապույտ *Թելի բաղադրություն* Հիմնական թելը խառնուրդ տեսակի, բամբակի պարունակությունը ոչ պակաս 35%: Հիմքի թելը polyester Lycra 75/15 *Կար* Թելի գույն- ըստ գործվածքի գույնի Կցակարի կարի խտությունը 3.5կկթ/սմ, լայնությունը 7-9մմ, թելը 150/2 den 100% պոլիէսթեր: *Փաթեթավորում* Յուրաքանչյուր տասը հատը պետք է փաթեթավորված լինի մեկ պոլիէթիլենային տոպրակով: *Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Կաճառողը պարտավոր է Գնորդի համաձայնեցմանը ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշները, որից հետո միայն մատակարարել ապրանքները՝ համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրերի և համաձայնեցված նմուշների:*							

8	18231400	Տաբատներ կանացի	<<	ԿԱՆԱՑԻ ՏԱԲԱՏ *Նկարագիր* Կանացի տաբատ, ոճը դասական սպորտային համադրությամբ /համաձայն հավելվածի, որը կցվում է/: Տաբատի գոտին 4սմ էլաստիկ ժապավենով, համակցված կապիչով, աջ և ձախ կողմերը գրպաններով, ձախ կողմի գրպանի վրա պետք է մետաքյա թելով ասեղնագործած լինի հիվանդանոցի լոգոն /երկարությունը 10սմ, լայնությունը 10 սմ/՝ երկու գույներով՝ կապույտ (գույնի կոդը PANTONE 2945C) և սպիտակ : Կազմակերպության լոգոյի դիզայնի ֆայլը .pdf ֆորմատով կցվում է, կոնքամասը նորմայից լայն 10%: *Առանձնահատկություններ* Կողային միացումները երկասեղ հատուկ նշանակության շղթայակար մեքենայով, մաքրակարերը 3 թել: Մյուս միացնող կարերը 5 թել մաքրակար-շղթայակար մեքենայով: Բոլոր մշակումները կատարվում են ունիվերսալ մեքենայով: Հատվող կարերը ամրակարվում են հատուկ նշանակության մեքենայով: Տաբատի գոտին մշակվում է էլաստիկ ժապավենով լայնությունը 4 սմ և գոտքատեղը մշակվում է հատուկ նշանակության շղթայակար մեքենայով կարերի հեռավորությունը 1-1.5սմ, որի մեջ տեղադրվում է շարժական ժապավեն: Տաբատի գրպանները ունեն թեք կտրվածք: Տոտերը	հատ	5445	2450250	450	Ք. Սևան Կարմիր բանակի 68	450	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օրվա ընթացքում

				մշակվում են ունիվերսալ կարով: Չափերի թույլատրելի առավելագույն շեղումը 1 սմ: *Գույն* Մուգ կապույտ: *Կտորի բաղադրություն* 100% բամբակ Կտորի տեսակը «ջինսային»(դենիմ), միագույն, առանց քիմիական մշակման կամ գունաթափման, խտությունը 340-440գ/մ2(10-13 oz/yd2): *Կար* Թելի գույն- ըստ կտորի գույնի Մաքրակարերի թել 150/2 den 100% պոլիէսթեր, կարի խտությունը 3.5կկթ/սմ, նվազագույնը լայնությունը 0.6 սմ: Ունիվերսալ և հատուկ նշանակության մեքենաների կարի թելերը 30/2 պոլիէսթեր, կարի խտությունը 3.5կկթ/սմ: *Փաթեթավորում* Յուրաքանչյուր 10 հատը պետք է փաթեթավորված լինի մեկ պոլիէթիլենային տոպրակով: *Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Կաճառողը պարտավոր է Գնորդի համաձայնեցմանը ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշները, որից հետո միայն մատակարարել ապրանքները՝ համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրերի և համաձայնեցված նմուշների:*							

9	18231400	Տաբատներ տղամարդու	<<	ՏՂԱՄԱՐԴՈՒ ՏԱԲԱՏ *Նկարագիր* Տղամարդու տաբատ, ոճը դասական սպորտային համադրությամբ /համաձայն հավերվածի, որը կցվում է/: Տաբատի գոտին 4սմ էլաստիկ ժապավենով, համակցված կապիչով, աջ և ձախ կողմերը գրպաններով, ձախ կողմի գրպանի վրա պետք է մետաքյա թելով ասեղնագործած լինի հիվանդանոցի լոգոն /երկարությունը 10սմ, լայնությունը 10 սմ/՝ երկու գույներով՝ կապույտ (գույնի կոդը PANTONE 2945C) և սպիտակ : Կազմակերպության լոգոյի դիզայնի ֆայլը .pdf ֆորմատով կցվում է: *Առանձնահատկություններ* Կողային միացումները երկասեղ հատուկ նշանակության շղթայակար մեքենայով, մաքրակարերը 3 թել: Մյուս միացնող կարերը 5 թել մաքրակար-շղթայակար մեքենայով: Բոլոր մշակումները կատարվում են ունիվերսալ մեքենայով: Հատվող կարերը ամրակարվում են հատուկ նշանակության մեքենայով: Տաբատի գոտին մշակվում է էլաստիկ ժապավենով լայնությունը 4 սմ և գոտքատեղը մշակվում է հատուկ նշանակության շղթայակար մեքենայով կարերի հեռավորությունը 1-1.5սմ, որի մեջ տեղադրվում է շարժական ժապավեն: Տաբատի գրպանները	հատ	5445	2450250	450	Ք. Սևան Կարմիր բանակի 68	450	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օրվա ընթացքում

				ունեն թեք կտրվածք: Տոտերը մշակվում են ունիվերսալ կարով լայնությունը 2-2.5սմ : Չափերի թույլատրելի առավելագույն շեղումը 1 սմ: *Գույն* Մուգ կապույտ, սև /համաձայնեցնել պատվիրատուի հետ նմուշները ներկայացնելու ժամանակ/: *Կտորի բաղադրություն* 100% բամբակ Կտորի տեսակը «ջինսային»(դենիմ), միագույն, առանց քիմիական մշակման կամ գունաթափման, խտությունը 340-440գ/մ2(10-13 oz/yd2): *Կար* Թելի գույն- ըստ կտորի գույնի Մաքրակարերի թել 150/2 den 100% պոլիէսթեր, կարի խտությունը 3.5կկթ/սմ, նվազագույնը լայնությունը 0.6 սմ: Ունիվերսալ և հատուկ նշանակության մեքենաների կարի թելերը 30/2 պոլիէսթեր, կարի խտությունը 3.5կկթ/սմ: *Փաթեթավորում* Յուրաքանչյուր 10 հատը պետք է փաթեթավորված լինի մեկ պոլիէթիլենային տոպրակով: *Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Կաճառողը պարտավոր է Գնորդի համաձայնեցմանը ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշները, որից հետո միայն*							

				մատակարարել ապրանքները՝ համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրերի և համաձայնեցված նմուշների:							

Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա սեպտեմբերի 30-ը:

*** Ապրանքը պետք է մատակարարվի Ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեով ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի պահեստ: Մատակարարումը իրականացնել աշխատանքային օրերին 09:00-ից մինչև 16:00:*

**** Բոլոր ապրանքները պետք է լինեն չօգտագործված: Բոլոր ապրանքների գծապատկերներն կցվում են:*

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>>
ՓԲԸ
Ք.Սևան Կարմիր Բանակի 68
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ Սևանի մ/ճ
Հ/Հ 163148133255
ՀՎՀՀ 08601459

Տնօրեն՝ _____ Ն. Գրիգորյան
/ստորագրություն/

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ
Արարատի մարզ ք. Մասիս 1-ին փողոց
Հ/Հ 2472900158630000
ՀՎՀՀ 03804898

Տնօրեն՝ _____ Վ. Եղիազարյան
/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 2
« 13 » օգոստոսի 2019 թ. կնքված
ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/24-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	18411210	Սպորտային հագուստ կանացի ամառային									1354500	1354500	1354500	1354500	1354500
2	18411210	Սպորտային հագուստ տղամարդու ամառային									1354500	1354500	1354500	1354500	1354500
3	18411210	Սպորտային հագուստ կանացի ձմեռային										1554750	1554750	1554750	1554750
4	18411210	Սպորտային հագուստ տղամարդու ձմեռային										1554750	1554750	1554750	1554750
5	18341100	Շապիկ տղամարդու ձմեռային										705000	705000	705000	705000

6	18341100	Շապիկ կանացի /ձմեռային/										705000	705000	705000	705000
7	18311150	Ձուգագուլպաներ /անթաթ/										645000	645000	645000	645000
8	18231400	Տաբատներ կանացի									2450250	2450250	2450250	2450250	2450250
9	18231400	Տաբատներ տղամարդու									2450250	2450250	2450250	2450250	2450250

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*** Իրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>>
ՓԲԸ
Ք.Սևան Կարմիր Բանակի 68
<<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ Սևանի մ/ճ
Հ/Հ 163148133255
ՀՎՀՀ 08601459

Տնօրեն՝ _____ Ե. Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ
Արարատի մարզ ք. Մասիս 1-ին փողոց
Հ/Հ 2472900158630000
ՀՎՀՀ 03804898

Տնօրեն՝ _____ Վ. Եղիազարյան
/ստորագրություն/
Կ.Տ.